ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2017 թ.

№ 12 (1012)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 52 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարը՝ Մանկավարժական համալսարանում

Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարար Օլգա Վասիլևան հայաստանյան այցի ընթացքում հյուրընկալվեց նաև Մանկավարժական համալսարանում: Հայաստանի և Ռուսաստանի ԿԳ նախարարները հանդիպեցին ՀՊՄՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, Երևան քաղաքի ռուսաց լեզվի խորացված ուսուցում իրականացնող դպրոցների ուսուցիչների, բուհերի ռուսաց լեզվի և գրականության դասավանդողների հետ:

Նախարարն անդրադարձավ հայ և ռուս գրականությունների դարավոր կապին՝ ընդգծելով, որ այն համատեղ աշխատանքի հիմքն է: «Իմ առաքելությունն է շարունակել մեր կապերի ամրապնդման ու զարգացման գործընթացը կրթության ոլորտում: Կան բազում հայ գրողներ, բանաստեղծներ, երաժիշտներ, որոնք իրենց ներդրումն են ունեցել մշակույթների երկխոսության մեջ: Ռուս գրականագետները միշտ հետաքրքրվել են Հայաստանով, երկրի պատմությամբ, եզակի ճակատագրով, ինքնատիպ մշակույթով»,- ասաց նախարարը: Վերջինս հավելեց նաև, որ հայ և ռուս ժողովուրդների շփման գործում ռուսերենը մեծ դեր ունի, քանզի ներկայումս էականորեն մեծացել է ռուսաց լեզվի դերը, քանի որ այն մեծ նշանակություն ունի երկու երկրների՝ տարբեր ոլորտներում շփման և սերտ համագործակցության համար:

➤2

➤2

Մանկավարժը եղել և մնում է անձնվեր աշխատանքի ու անսպառ նվիրումի չափանիշ

Դեպի գիտելիքի աշխարհ մուտքն ազդարարող այս օրը տոն է բոլորի համար: Օրն իր հետ բերում է բարություն, ուրախություն և հավատ ապագայի նկատմամբ: Նոր ուսումնական տարվա սկիզբն ազդարարվեց նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում (ավագ դպրոց) և ՀՊՄՀ-ի № 57 հիմնական դպրոցում:

Օրվա առթիվ Մանկավարժական համալսարանի ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմը շնորհավորեց բուհի 10 ֆակուլտետների ուսա-

➤3

«Բացեք հայրենիքի դռները հայոց լեզվով. այն միակ բանալին է»

Հայաստանի կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի շրջանակներում 16 երկրի 62 ուսուցիչներ ակադեմիական 120 ժամ տևողությամբ դասընթացի ընթացքում վերապատրաստվեցին ուսումնական տարբեր խմբերում՝ մանկապարտեզի, տարրական ուսուցման, մեկօրյա դպրոցների, հայոց լեզվի և գրականության դասավանդման, լրացուցիչ կրթության կազմակերպման ուղղություններով, ինչպես նաև արտասահմանյան բուհերում հայերեն ուսումնասիրող ուսանողների

➤2

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՓՈԽԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Օգոստոսյան խորհրդակցությունների նախաշեմին Մանկավարժական համալսարանում ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը հանդիպեց կրթության ոլորտի ներկայացուցիչների հետ, որով էլ ազդարարվեց «Ուսուցիչ» նախաձեռնության մեկնարկը: Ներկայացվող ծրագրի նպատակն էր բարձրացնել ուսուցչի հեղինակությունը, բարելավել նրա սոցիալական վիճակը, նպաստել մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և այլն:

Նախարար Լևոն Մկրտչյանը նշեց, որ արդեն երկու տարի է՝ իրականացվում է կրթական համակարգի վերափոխումներ. «Հայաստանի

➤3

Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարը՝ Մանկավարժական համալսարանում

➢1 Օլգա Վասիլևան բարձր գնահատեց Հայաստանում ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների հայկական ասոցիացիայի գործունեությունը և վստահեցրեց, որ կանեն հնարավորը ուսուցիչների վերապատրաստումները Ռուսաստանում կազմակերպելու համար: «Ռուսաց լեզվի ուսուցիչները յուրօրինակ կամուրջ են Հայաստանի և Ռուսաստանի միջև. նրանք անում են հնարավորը, որ չխաթարվեն երկու երկրների միջև եղած լավագույն ավանդույթները»,-ամփոփեց ՌԴ նախարարը:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը մեծ պատիվ համարեց Մանկավարժական համալսարան ՌԴ ԿԳ նախարար Օլգա Վասիլևայի այցը և բուհի Գիտական խորհրդի որոշմամբ՝ նրան շնորհեց ՀՊՀՄ-ի «Պատվավոր դոկտոր»-ի կոչում: Ռեկտորը նշեց, որ 1948-ից համալսարանը կրում է Մեծ Լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը, որը ստացել է եվրոպական բարձրագույն կրթություն: «1839 թվականին Աբովյանը ստեղծել է ռուսաց լեզվի պրակտիկ և տեսական նոր քերականություն հայերի համար: Նա կարծում էր, որ ռուսաց լեզվի իմացությունը մեր ժողովրդի զարգացման համար կարևոր նախապայման է»,-ընդգծեց Ռուբեն Միրզախանյանը:

«Կրթության ոլորտի զարգացման գործում առաջնային դեր ունի մանկավարժական որակյալ կրթությունը, առանց որի հնարավոր չէ համապատասխան առաջընթաց գրանցել»,-ասաց ՀՊՄՀ-ի պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ մեջբերելով ՌԴ ԿԳ նախարարի գործունեության առաջնահերթությունները:

Պրոռեկտորը նկատեց, որ պաշտոնավարման ընթացքում Օլգա Վասիլևան մանկավարժության ոլորտի փոփոխության կարևորագույն բաղկացուցիչներ է համարել ուսուցչին, նրա մատուցած ծառայությունն ու առաքելությունը:

Ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչների հայկական ասոցիացիայի նախագահ Լիլյա Բալասանյանը ևս մեկ անգամ հիշեցրեց, որ ռուսաց լեզուն մշտապես եղել է դպրոցներում և բուհերում դասավանդվող պարտադիր առարկա:

«Մանկավարժական համալսարանը յուրահատուկ մոտեցում ունի ռուսաց լեզվի դասավանդողների հանդեպ, քանի որ ուսուցիչների պատրաստման խոշորագույն դարբնոցն է»,-նշեց Լ. Բալասանյանը՝ խոսելով իր ղեկավարած կառույցի արդյունավետության, ուսուցիչների վերապատրաստման, դավանդող մեթոդների վերաբերյալ:

№ 198 դպրոցի ուսուցչուհի Կարինե Դավթյանն էլ ուսուցիչների անունից վստահեցրեց, որ ռուսաց լեզվի ուսուցման գործում բոլորն ունեն միևնույն նպատակը. պետք է լինել միասին: «Ռուսերեն խոսքը միավորում է բոլորիս»,-նշեց ուսուցչուհին ու հավելեց՝ անում են ամեն ինչ, որ աշակերտները սիրեն ռուսերենը, իսկ ուսուցիչները՝ հաճույքով դասավանդեն:

ՌԴ ԿԳ նախարարի գլխավորած պատվիրակությանը Մանկավարժականում դիմավորեցին պարարվեստի մանկավարժության ուսանողներն ու բուհի փողային նվագախումբը: Նախարարը շրջեց նաև լսարաններում և ուսանողներին խնդրեց արտասանել ռուս դասականների ստեղծագործություններից:

«Բացեք հայրենիքի դռները հայոց լեզվով. այն միակ բանալին է»

➢1 համար: Հայրենիք եկած ուսուցիչները ծրագրի ավարտին Մանկավարժական համալսարանում հավաստագրեր ստացան: Միջոցառման ընթացքում ՀՊՄՀ աշխատակազմի և միզագային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին վերապատրաստման ծրագրին մասնակցելու համար: Պրոռեկտորը կարևորեց ուսոցիչների գործունեությունը Սփյուռքում ազգապահպանության գործում, որովհետև նրանք իրենց երկրներում հայոց լեզվի դեսպաններն են:

Կրթության և գիտության նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանն էլ հույս հայտնեց, որ մեկամսյան դասընթացների ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ուսուցիչները կկարողանան պահպանել և տանել այլ երկրներ: Մասնագետը նկատեց նաև, որ ուսուցիչների առաջարկները հնարավորություն տվեցին նախանշել խնդիրների լուծման նոր ուղիներ, ամենայա վերապատրաստումները կատարելագործելու նոր եղանակներ: Արկադի Պապոյանը հույս հայտնեց, որ վերապատրաստվող ուսուցիչների շարքերը գնալով կստվարանա՝ ի նպաստ Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդման:

«Սովորելու, գործին լծվելու ձեր պատրաստակամությունն ու ցանկությունը թույլ են տալիս հպարտությամբ նայել միասին անցած ճանապարհին: Մեր նպատակն է կրկին հանդիպել նույն ճանապարհին՝ միասին բացելու մեր և ձեր միջև կարևոր օղակի՝ աշակերտների համար փակ դռները. նրանք մեր ապագան են»,-ասաց «Սփյուռք» կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը:

Պրոֆեսորը վստահեցրեց, որ բուհի դռները միշտ բաց են սփյուռքահայ ուսուցիչների առջև և այս ձեռնարկի ավարտով նրանց ցտեսություն չեն ասում, այլ ողջունում են սփյուռքահայ ուսուցիչների հարատև ներկայությունը Մանկավարժական համալսարանում:

«Հրաժեշտի թախիծը սիրո նշան է». մեջբերելով Ավետիք Իսահակյանի խոսքը՝ նշեց Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանն ու հավելեց, որ մեկամսյա դասընթացները նշան են առ հայրենիքն ու մայրենի լեզուն ունեցած սիրո. «Բացեք հայրենիքի դռները հայոց լեզվով. այն միակ բանալին է»:

«Սփյուռքի ուսուցչի համար չկա ավելի մեծ բան, քան հայրենիքի ջերմությունն ու սերը: Մենք վերադառնում ենք՝ մեր անպարագիծ գործունեությամբ, անմնացորդ սիրով ու նվիրումով կատարելու ուսուցչի պատմական առաքելությունը»,- ասաց մոսկվայաբնակ ուսուցչուհի Թամարա Մաթևոսյանը: Նա բոլոր մասնակիցների անունից շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին և վերապատրաստող դասախոսներին՝ վստահեցնելով, որ նրանք արեցին հնարավորը իրենց զատված հայրենակիցների սրտերը հայրենիքով լցնելու գործում: Թամարա Մաթևոսյանն իր գործընկերներին հորդորեց անել հնարավորը, որ խոշոր պետությունների հարաբերություններում մեր հայրենիքը չդառնա մանրադրամ. «Գնանք դառնալու այն կարևոր հանգույցը, որ ամուր է պահում հայրենիք-սփյուռք կապը»:

Ֆրանսահայ ուսուցիչ Մկրտիչ Պասմանն էլ նկատեց, որ եթե աշխարհի 16 երկրից հավաքված ուսուցիչներին մտահոգում է հայ աշակերտն ու նրա ճակատագիրը, ուրեմն պետք է ձեռք ձեռքի տալ և արթնացնել ամեն հայ մանուկի մեջ քնած առյուծին, սնել, որ նա էլ թև ու թռիչք առնի:

«Ինձ համար հաճելի էր ապրել Հայաստանում և սովորել հայերեն: Համոզված եմ, որ հայերն ու հայերենը միշտ կլինեն»,-հայաբառ խոսեց օտարազգի ուսանող Վալերի Մալիշևը և շնորհակալություն հայտնեց ծրագրի կազմակերպիչներին ու վերապատրաստող դասախոսներին:

Ի դեպ, մեկամսյա վերապատրաստումների ընթացքում սփյուռքահայ ուսուցիչների համար կազմակերպվել են արտալսարանային միջոցառումներ, այցելություններ թանգարաններ և ճամփորդություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

...աշխատանքի ու անսպառ նվիրումի չափանիշ

➢1 նողներին, մասնավորապես 1-ին կուրսեցիներին՝ վստահեցնելով, որ պատասխանատվություն և պատիվ է լինել Մեծ Լուսավորչի անունը կրող դարբնոցի ուսանողը:

Բակալավրիատի 976 և մագիստրատուրայի 700 1-ին կուրսեցիներին դիմավորեցին և շնորհավորեցին ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչներն ու դասախոսները: Նրանք իրենց շնորհավորական ուղերձներում ընդգծեցին, որ Մանկավարժական համալսարանը տասնամյակներ շարունակ կրթում և դաստիարակում է մեր երկրի ապագա սերնդին՝ մնալով ՀՀ-ում առաջատար մանկավարժական բուհը: Նրանք ևս մեկ անգամ ընդգծեցին՝ մանկավարժը եղել և մնում է անձնվեր աշխատանքի, անսպառ նվիրումի չափանիշ, ով ջանք ու եռանդ չի խնայում կրթված ու գիտակից սերունդներ կրթելու գործում:

Մանկավարժական համալսարանի 1-ին կուրսի ուսանողների համար Գիտելիքի, գրի և դպրության օրը շարունակվեց բուհում կատարած շրջայցով, որին հաջորդեց բարձրագույն կրթական հաստատությունում առաջին դասը:

Վարժարան

143 աշակերտ նոր նպատակներով ու երազանքներով առաջին անգամ ոտք դրեց ՀՊՄՀ հենակետային վարժարան: Վարժարանի սաներին, ուսանողներին, մանկավարժներին, պրոֆեսորադասախոսական անձնակազմին, գիտության ու կրթության գործի նվիրյալներին ողջունեց և շնորհավորեց վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանը: «Նոր ուսումնական տարին պարտավորեցնող է բոլորիս համար, որովհետև կրթության բնագավառում իրականացվող բարեփոխումների հաջողությունը կախված

է յուրաքանչյուրիս հետևողական աշխատանքից ու նվիրումից: Պատահական չէ, որ սեպտեմբերի մեկը նշվում է նաև որպես գիտելիքի օր, գիտելիք, որը հազարամյակներ շարունակ եղել է մեր ժողովրդի գերագույն արժեքներից մեկը: Հաջողություն եմ մաղթում բոլորիս ուսումնառության, ազգային կրթության ու հայեցի դաստիարակության հայրենանվեր գործում»,- ասաց տնօրենը:

Վարժարանի լրագրության հոսքի աշակերտներին դիմավորեց և շնորհավորեց նաև ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանը:

«Գիտելիքի աշխարհը նման է մի իրավիճակի, որտեղ, բացում ես փակ դռները, որպեսզի տեսնես, թե դռնից այն կողմ ինչ կա, և վարագույրը հետ ես տանում՝ բացահայտելով գիտելիքի ճանաչման ճանապարհը»,- ասաց Լևոն Գալստյանը և հավելեց, որ հեռուստառադիոլրագրության ամբիոնը միշտ պատրաստ է համագործակցել և օգնել ապագա լրագրողներին ամեն հարցում: «Մենք միասին անցնելու ճանապարհ ունենք, ամբիոնում ունենք բոլոր հնարավորությունները ձեր մասնագիտական կայացմանը նպաստելու համար»,- ամփոփեց Լևոն Գալստյանը:

Վարժարանի նորեկների համար անակնկալ էր պատրաստել նաև դպրոցի աշակերտական խորհուրդը. պատահականության սկզբունքով ընտրված կրթության վերաբերյալ աֆորիզմները աշակերտների համար խորհրդանշեցին նոր ուսումնական տարվա սկիզբ և կուղեկցեն նրանց ողջ տարվա ընթացքում:

Դպրոց

Տոնական մթնոլորտը շարունակվեց ՀՊՄՀ № 57 հիմնական դպրոցում: Ուրախ ու պայծառ տրամադրությամբ դպրոցն իր դռները բացեց աշակերտների առջև՝ խոստանալով նոր ու հետաքրքիր հանդիպումներով բացահայտել գիտության չբացահայտված մոլորակները: Օրն անմոռանալի դարձավ հատկապես 104 առաջին դասարանցիների համար, ովքեր առաջին անգամ են ոտք դնում այդ զարմանահրաշ մոլորակը:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը, շնորհավորելով բոլորին գիտելիքի և դպրության օրվա առթիվ, նշեց. «Ավանդույթի համաձայն ամեն տարի դպրոցն իր դռներն է բացում սաների առջև, սակայն պետք է ընդգծեմ մի կարևոր փաստ՝ տարեցտարի մեր

շարքերը համալրվում են նոր աշակերտներով և գնալով էլ ավելի ենք շատանում: Իսկ այս հարկի ներքո ձեզ սպասվում են նոր բացահայտումներ և ձեռքբերումներ»: Նաիրա Տողանյանը փոխանցեց ՀՊՄՀ ղեկավարության շնորհավորական ուղերձն ու Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի ուղերձը. «Մեր երկրի զարգացումն արձանագրելու հիմնական գրավականը որակյալ կրթությունն է, ուր ներդրված ջանքերը վաղվա մեր արժանապատիվ օրվա երաշխիքն են: Ուստի լիահույս եմ, որ մեր աշակերտների ուսումնառության առաջիկա տարիները կդառնան իրենց օժտվածության և տաղանդի զարգացման, գիտելիքների և ունակությունների ձեռքբերման պատասխանատու ու կարևոր շրջան, և արդյունքում մեր երկիրը կունենա ավելի հայրենասեր, կրթված ու պատասխանատու քաղաքացիներ»:

Գիտելիքի օրվա կապակցությամբ ներկաներին ողջունեցին կրթօջախի արդեն հնաբնակ սաները, հեքիաթների հերոսները, ովքեր էլ գիտելիքի բանալիները հանձնեցին առաջին դասարանցիներին: Առաջին զանգի ղողանջների հնչյունների ուղեկ-

ցությամբ յուրաքանչյուր դասարան իր բանալիով՝ բացելով գիտելիքների ամրոցի դուռը, հադիսավորությամբ և ծափողջույններով մտավ դպրոց: Իսկ վերջում երազանքներով լի փուչիկներն աշակերտները բաց թողեցին երկինք՝ մաղթելով խաղաղություն մեր հայրենիքին:

Մանկավարժական համալսարանը շնորհավորում է բոլոր աշակերտներին, ուսանողներին, մանկավարժներին, կրթության գործի նվիրյալներին մաղթում՝ լուսավոր ճանապարհ, նվաճումներով և ձեռքբերումներով լի նոր ուսումնական տարի:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՓՈԽԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ

➢1 Հանրապետությունն իր անկախության առաջին օրերից սկսեց ձևավորել ազգային պետական կրթական համակարգը: Մեր ուժը նրանում է, որ բարեփոխումները շարունակական բնույթ են կրում: Մենք կարողացանք ձևավորել կրթական համակարգի այնպիսի շենք, որն այսօր չափելի, ընկալելի և հասկանալի է աշխարհի համար»,- ընդգծեց նախարարը:

Նախարարը նկատեց՝ արդեն ժամանակն է անցնելու բարեփոխումների երկրորդ փուլին, որը նույնպես շատ կարևոր է, իսկ այդտեղ հիմնական հարցը որակի հիմնախնդիրն է, որն այսօր գերակա է գերատեսչության համար:

«Մենք մի քանի մտահոգություններ ունենք՝ կրթության որակի հիմնախնդիրը կրթության մեջ ներգրավվածների և մասնագիտությունների ուղղվածության հարցն է: Շատ մտահոգիչ է այն, որ բարձրագույն կրթական համակարգում մեր բակալավրական շրջանավարտների շուրջ 70 տոկոսը հումանիտար կրթության ներկայացուցիչներ են: Մյուս 30 տոկոսի զգալի մասը տեղեկատվական տեխնոլոգիաներն են, այսպիսով բնական գիտությունների պահպանման հարցում մեծ մտահոգություն ունենք»,- ասաց Լևոն Մկրտչյանը:

Խոսելով ծրագրի մասին՝ նախարարը նկատեց, որ այն կօգնի ուսուցչի դերակատարությունը հասարակության մեջ մեծացնելուն, և որ հասարակությունը պետք է փոխի վերաբերմունքը ուսուցիչների նկատմամբ, հակառակ դեպքում ծրագիրն արդյունք չի տա:

Լևոն Մկրտչյանը կրթական համակարգը նմանեցրեց ժամացույցի, որտեղ, եթե մի փոքր օղակ էլ չի աշխատում, ապա ժամացույցը սխալ է աշխատում: Նրա խոսքով՝ կրթության համակարգը Հայաստանում դեմոգրաֆիական իր աշխարհագրությամբ բավականին բարդ իրավիճակում է զարգացել՝ սկսած հանրակրթությունից, վերջացրած բարձրագույն կրթությամբ:

Հանրակրթությունում մոտ 1400 դպրոցների մի հսկայական զանգված կա, որտեղ հաստատություններն ունեն առավելագույնը 100 աշակերտ, իսկ բարձրագույն կրթության ասպարեզում մոտ 87.000 ուսանողությանը սպասարկում են 65-ից ավելի համալսարաններ: Լևոն Մկրտչյանը նշեց, որ դա շատ լուրջ մարտահրավեր է և ուղղակիորեն վտանգում է կրթական համակարգի որակը:

Հանդիպմանը ներկա էին հանրակրթական դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, կրթության ոլորտի ներկայացուցիչներ, ովքեր հետագա հանդիպումներին հանդես կգան առաջարկներով, որից հետո կմշակվի լիարժեք ծրագիր:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ-2017

Հրաժեշտ տվեցին Հայաստանին՝ խոստանալով վերադառնալ

Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնամարզական բազայում մեկնարկած «Ամառային դպրոց-2017» ծրագիրն ավարտվեց:

Մանկավարժական համալսարանի, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և ՀՊՄՀ-ի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ արդեն հինգերորդ տարին կազմակերպվող ծրագրին մասնակցում էին 5 երկրների՝ Լիտվայի, Հունգարիայի, Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության, Արցախի Հանրապետության համալսարաններից ու Մանկավարժական համալսարանից 90 ուսանող:

Հանդիսավոր փակման արարողությանը մասնակիցները ներկայացրին հումորային, տեղեկատվական տեսահոլովակներ, երգեցին, պարեցին և արտահայտեցին իրենց զգացողություններն ու ձեռքբերումները, որոնք ունեցել էին այս օրերի ընթացքում: Օտարազգի ուսանողները հատկապես ընդգծեցին հայերի ջերմությունը, հյուրընկալությունը, իսկ ծրագրի շրջանակում ամենամեծ ձեռքբերումը համարեցին լավ ընկերների հետ շփումը: Հրաժեշտ տալով նոր, բայց արդեն հարազատ դարձած ընկերներին՝ մասնակիցները խոստացան առաջին իսկ հնարավորության դեպքում անպայման վերադառնալ Հայաստան:

ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանը հավաքի փակման արարողությանը հայտարարեց, որ ծրագիրն ունի ճանաչողական առաքելություն. «Այս ծրագրի ընթացքում կարողանում ենք տարբեր երկրների ուսանողական կառույցների խմբերին ճանաչելի դարձնել Հայաստանը: Ուրախ եմ, որ հասցրել եք այս տասն օրերի ընթացքում ճանաչել Հայաստանը, բայց այդ տասն օրերը շատ քիչ է հասկանալու հային, Հայաստանը: Տարբեր ծրագրերի տեսքով մենք ամեն ինչ անելու ենք, որ դուք էլի գաք Հայաստան»:

ՀՊՄՀ պրոռեկտոր Արա Երեմյանն էլ մեջբերելով Անտուան դը Սենտ-Էկզյուպերիի խոսքերը՝ վստահեցրեց, որ չկա ավելի մեծ պերճանք, քան մարդկային հաղորդակցությունն է: «Դուք այս օրերի ընթացքում ծանոթացաք հայ մշակույթին, պատմությանն ու ավանդույթներին: Դուք ձեր երկներում կլինեք դրանց կրողն ու որպես դեսպաններ կտարածեք այն»,- ասաց Արա Երեմյանը:

Միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Քրիստինա Ծատուրյանը վստահեցրեց, որ նման ծրագրերին մասնակցությունը ուսանողներին հնարավորություն է տալիս շփվել ու ծանոթանալ այլ մշակույթների և լեզվի կրողների հետ, փոխվում է ուսանողների աշխարհայացքը, նրանք ավելի բաց և պատրաստ են դառնում հետագա համագործակցությունների, ուսուցման նոր ձևերի և միջազգային ծրագրերի մասնակցության համար: «Հայաստանն արևի երկիր է, և ձեզնից յուրաքանչյուրն իր երկիր կտանի այդ արևից մի փոքր մաս»,-նշեց Քրիստինա Ծատուրյանը: Նա հավելեց, որ այս տարի ծրագրում կրթական մասն առավել մեծ տեղ է զբաղեցրել, ինչը դրական ազդեցություն ունի: Օտարազգի ուսանողները շատ տպավորված են, քանի որ այդպես ավելի լավ են պատկերացում կազմել հայաստանյան կրթական համակարգի, հայկական պատմության ու մշակույթի մասին: Միջազգային համագործակցության բաժնի ղեկավարն այս տարվա ձեռքբերումներից հատկանշական համարեց խմբային աշխատանքների ավելի շատ կազմակերպումը և խմբերին համակարգողներ նշանակելը, ինչը նպատակ ուներ ամրապնդել համագործակցային աշխատանքի սկզբունքը:

Մանկավարժական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանը շնորհակալություն հայտնեց ծրագրի կազմակերպիչներին և մասնակիցներին՝ վստահեցնելով, որ օտարազգի հյուրերը մեր երկրից գնում են հիացած և անմոռանալի տպավորություններով: Ներսիկ Մարգարյանը նկատեց, որ ծրագրի լավագույն գնահատականը ուսանողների տպավորություններն են և տարեցտարի ավելի շատ թվով ուսանողների մասնակցության հայտերի առկայությունը: ՈՒԽ նախագահը նաև հիշեցրեց, որ նախորդ տարի Մանկավարժականի «Ամառային դպրոց» միջազգային ծրագիրը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից ճանաչվել է լավագույնը և արժանացել «Հայկյան» մրցանակի:

Չեռնարկի ավարտին ծրագրի մասնակիցներն ստացան հավաստագրեր:

Տասնօրյա հավաքի շրջանակներում մասնակիցների համար կազմակերպվել են այցելություններ պատմամշակութային վայրեր, զրույց-քննարկումներ, խաղեր և հանդիպումներ: Գառնի, Գեղարդ, Էջմիածին, Սևանի թերակղզի, Ծաղկաձոր և Դիլիջան. 10 օր շարունակ ծրագրի մասնակիցները շրջել են Հայաստանի մի շարք պատմամշակութային վայրերում, ծանոթացել հայոց պատմությանը, հայ երիտասարդների ուսանողական կյանքին, ունեցել մի շարք հանդիպումներ ու քննարկումներ:

Նշենք, որ Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայում անցկացվող տասնօրյա «Ամառային դպրոց-2017» միջազգային ծրագրին մասնակցում էին 77 ուսանող՝ Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ, Լիտվայի կրթական գիտությունների, Մաքսիմ Տանկի անվան Բելառուսի պետական մանկավարժական, Մոսկվայի քաղաքային հոգեբանամանկավարժական համալսարանների, Մոսկվայի Ալեքսանդր Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի, Արցախի պետական և Մանկավարժական համալսարանների ուսանողներ:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՉԱՓՈՒՄ

ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը սեպտեմբերի 8-ին ընդունել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի հասարակագիտության բաժնի ուսանողներին և դասախոսներին: Հանդիպումն ընթացել է տարբեր հարցերի վերաբերյալ բովանդակալից քննարկումների ձևաչափում. ՀՀ ԱԺ փոխնախագահին ուղղված հարցերն առնչվել են տարբեր ոլորտների և խնդիրների՝ կուտակային կենսաթոշակային համակարգի արդյունավետություն, սահմանադրական բարեփոխումների արդյունքում երկրի կառավարման ձևի փոփոխման նպատակահարմարություն, տնտեսության զարգացման համար իրականացվող քայլեր, ԼՂ հիմնահարցի կարգավորում, Հայոց ցեղասպանության ճանաչում, ինչպես նաև մեր երկրի արտաքին ու ներքին քաղաքական գործընթացներին առնչվող բազմաթիվ հարցեր:

Խոսելով Հայաստանի Հանրապետության՝ արտաքին քաղաքական ոլորտում որդեգրած դիրքորոշման մասին՝ Էդուարդ Շարմազանովը համոզմունք է հայտնել, որ ՀՀ արտաքին քաղաքական ուղղությունները վերանայման կարիք չունեն: «Հայաստանը ՀԱՊԿ անդամ պետություն է, անդամակցում է ԵԱՏՄ-ին, Ռուսաստանի Դաշնության հետ ունի դինամիկ զարգացող դաշնակցային հարաբերություններ, գործընկերային հարաբերություններ ունի Եվրոպական միության, ԱՄՆ-ի, ինչպես նաև հարևան Վրաստանի և Իրանի հետ»,-նշել է Էդուարդ Շարմազանովը:

Խոսելով ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության մասին՝ Աժ փոխնախագահը կարծիք է հայտնել, որ Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին արդարացված է, և մեր պետությունը դեմ է այդ կառույցից դուրս գալուն:

ՀՀ Աժ փոխնախագահն ուսանողների խնդրանքով անդրադարձել է նաև ԼՂ հիմնախնդրին և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը: «Արցախը համայն հայության հաղթանակն է. այդ հաղթանակն անհնար կլիներ առանց Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության»,- ասել է Է.Շարմազանովը և կարծիք է հայտնել, որ հայ ժողովրդի հաղթանակի գրավականն արժանապատիվ ապրելու և արարելու նրա անկոտրում ձգտումն է:

Էդուարդ Շարմազանովը նշել է, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը զուգահեռ իրականացվում է ժխտողականության դեմ պայքար և այս հարցում առանձնակի կարևորել է Սփյուռքի դերը:

Արդյունավետ գործունեության համար

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը «Մանկավարժական համալսարան» մեդալով պարգևատրեց Ռուսաստանի Դաշնության դեպանությանը կից Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի տնօրեն Մարկ Կալինինին՝ ՀՀ-ում աշխատանքային գործունեության ավարտի առթիվ: Ռեկտորը նշեց, որ այս պարգևը վկայությունն է Մարկ Կալինինի արդյունավետ գործունեության, ինչպես նաև ընդգծում է նրա մեծ դերը ռուսերենի և ռուս մշակույթի տարածման գործում: Ռուբեն Միրզախանյանը նկատեց, որ ռուսերենի տարածումն ու դասավանդումը ՀՀ-ում եղել և մնում է կրթական ոլորտի և մասնավորապես ՀՊՄՀ-ի կարևորագույն ուղղություններից մեկը:

Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի տնօրեն Մարկ Կալինինը շնորհակալություն հայտնեց պարգևի համար և խոստացավ հետագայում ևս արդարացնել այս վստահությունը: Մարկ Կալինինը մեդալը կրկնակի հաճելի համարեց՝ նշելով, որ առաջին մասնագիտությամբ ուսուցիչ է և գիտակցում է մանկավարժական բուհերի դերն ու կարևորությունը երկրի առաջխաղացման ու զարգացման գործում:

Հանդիպման ավարտին գործընկերները հուշանվերներ փոխանակեցին:

Ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ

Ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ: Ռեկտորը նախ շնորհավորեց ներկաներին նոր ուսումնական տարվա առթիվ և մաղթեց նոր ձեռքբերումներով լի տարի, այնուհետև խոսեց 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներից և ընդգծեց, որ այս տարի առկա համակարգում առավել քիչ թվով ուսանողներ են ընդունվել, իսկ ավելի շահեկան դիրքում են գտնվում մագիստրատուրան և շարունակական կրթությունը: Ռեկտորը նկատեց, որ իրավիճակն առավել բարդ կլինի մյուս տարի, քանզի, ելնելով կրթական ոլորտի բարեփոխումներից, այդ տարի շատ ավելի քիչ թվով շրջանավարտներ են լինելու, որն էլ ենթադրում է՝ դիմորդների թվի նվազում. «Ուսանողների թվի նվազումն իր հետ կբերի մի շարք խնդիրներ: Պետք է գործնականում ռեալ քայլեր անել, որոնք էլ կնվազեցնեն կանխատեսվող ռիսկերը: Նա անդրադարձավ նաև ավարտական քննություններին՝ նկատելով, որ առաջիկայում ավարտական քննությունները կփոխարինվեն ավարտական նիշով, որն էլ ձևավորվելու է երկու բաղադրիչից՝ ավարտական աշխատանքից և պրակտիկայից: Ռուբեն Միրզախանյանը հորդորեց ներկաներին՝ ավելի մեծ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքներին, հաշվի առնելով ոչ միայն ծավալը, այլ որակը, ինքնուրույնությունը, վերլուծական միտքը և այլն: Այդ իսկ պատճառով այս տարի ավելի շուտ կհաստատվեն ավարտական աշխատանքների թեմաները:

Անդրադառնալով լսարանային պայմաններին՝ ռետորը նկատեց, որ այս տարի լսարաններն առավել հագեցված են ժամանակակից տեխնիկայով և ամեն բան արվել է, որպեսզի դասախոսություններն ինտերակտիվ լինեն: Ռեկտորը նշեց նաև, որ այսօր կրթական ոլորտում ընտրության շատ տարբերակներ կան, իսկ ուսանողը նախընտրությունը տալիս է որակյալ կրթությանը, այս կոնտեքստում պետք է ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն: Դա ենթադրում է երկուստեք ամենօրյա լուրջ աշխատանք դասախոսի-ուսանողի միջև:

Ռեկտորը պատասխանեց նաև դասախոսների հարցերին, որոնք վերաբերում էին նոր ուսումնական ծրագրերին, վարձավճարներին, կրթական քաղաքականության նոր մոտեցումներին:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՈՉԻՆՉ ԱՆՄՆԱՐ ՉԷ, ՊԱՐԶԱՊԵՍ ՊԵՏՔ Է ՑԱՆԿԱՆԱԼ ԵՎ ՓՈՐՁԵԼ...

Գոհար Քոլոզյանը ծնվել է Արմավիր մարզի Արմավիր քաղաքում, ծննդավայրում դպրոցը գերազանց ավարտելուց հետո այս տարի պետպատվերի համակարգով ընդունվել է ՀՊՄՀ-ի Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժին:

- Ինչո՞ւ նախապատվությունը տվեցիր հենց Մանկավարժական համալսարանին:

- Մեծացել եմ մանկավարժի ընտանիքում, մայրս երաժշտության ուսուցչուհի է, և ես դեռևս փոքր տարիքից ցանկացել եմ ուսուցչուհի դառնալ: Մասնագիտությանս ընտրության հարցում ունեցել եմ հստակ կողմնորոշում, սակայն մանկավարժ մայրիկիս փաստը ևս ունեցել է իր դրական ազդեցությունը: Մանկուց ընտանիքում տեսել եմ, թե ինչպես են սիրում և հարգում ուսուցչին, ինքս էլ շատ եմ սիրել իմ ուսուցիչներին: Մայրս ևս շատ էր ցանկանում, որ իր երեխաներից մեկը շարունակի մանկավարժի իր ճանապարհը: Միշտ սիրել եմ շփվել, զբաղվել և աշխատել երեխաների հետ:

- Մանկավարժի քո իդեալը...

- Ինձ համար մանկավարժի կերպարը հենց իմ առաջին ուսուցչուհին է՝ Անահիտը Սարգսյանը, ով եղել է տարրական դասարանիս ուսուցչուհին. նա ինձ համար իսկական մանկավարժի իդեալ է եղել: Դպրոցական տարիներից սկսած անընդհատ երազում էի նմանվել նրան, պատկերացնում էի ինձ նրա փոխարեն դասավանդելիս: Մասնագիտական կողմնորոշմանս մեջ նա նույնպես մեծ դեր ունի: Հատկապես շատ էի հավանում ու մինչ օրս հիշում եմ նրա համբերատարությունը, հոգատարությունը, յուրաքանչյուր աշակերտին յուրօրինակ մոտեցում ցուցաբերելը, յուրաքանչյուրին իր ձևով սիրելու հատկությունը և այլն:

- Ի՞նչ ակնկալիքներ ունես Մանկավարժական համալսարանից:

- Եկել եմ այս բուհ, որպեսզի շատ գիտելիքներ ստանամ, լավ մասնագետ դառնամ և լինեմ Մեծ Լուսավորչի անունը կրող բուհի արժանի շրջանավարտը: Իսկ անուհետև վստահ եմ, որ ստացածս գիտելիքներն արժանապատվորեն կփոխանցեմ մատաղ սերնդին:

- Արդեն մի քանի օր է՝ ուսանող ես. ի՞նչ տպավորություններ ունես...

- Սկզբից դպրոցի և համալսարանի տարբերությունը չէի զգում: Սակայն, առաջին իսկ օրվանից, մտնելով այս բուհ, կարծես թե ավելի հասուն դարձա, մեծացա, զգացի ավելի մեծ պատասխանատվություն ինձ վրա: Հասկացա, որ բուհն այն վայրն է, որտեղ յուրաքանչյուր մանրուք անտեղի չէ, և լավ մասնագետ դառնալու հարցում այդ ամենը թողնում է իր դրական հետքը:

- Այս օրերի ընթացքում ի՞նչ դժվարությունների ես հանդիպել:

- Ինչ դժվարությունների էլ որ հանդիպել եմ, դրանք եղել են հաճելի: Ընտրվել եմ կուրսի ավագ, իսկ այն լի է հանձնարարականներով և պարտարականություններով: Սկզբում մի փոքր անհանգստացա, շփոթվեցի, բայց ֆակուլտետի դեկանատի աշխատակիցների օգնությամբ ամեն բան հաղթահարեցի, նրանք ինձ ուղղորդեցին և նրանց շնորհիվ արդեն կարողացա հարմարվել բուհին և բուհական կյանքին:

- Ի՞նչ նախասիրություններ ունես:

- Շատ եմ սիրում երաժշտությունը, այն ինձ համար մի ուրիշ աշխարհ է, 7 տարի հաճախել եմ երաժշտական դասընթացների և ավարտել եմ գերազանցությամբ: Տարիներ առաջ այնքան էի տարվել երաժշտությամբ, որ ցանկանում էի ուսումս շարունակել այդ ուղղությամբ: Այսօր, երբ ազատ ժամանակ եմ ունենում, անպայման նվագում եմ. դաշնամուրս իր ուրույն տեղն ու դերն ունի ինչպես իմ կյանքում, այնպես էլ մեր տանը: Երգեցողությամբ նույնպես զբաղվել եմ և դա ևս շատ եմ սիրում, հուսով, որ երկրորդ մասնագիտությունս այդ ուղղությամբ կընտրեմ: Կարծում եմ, որ երգն ու երաժշտությունը մանկավարժի համար կարևոր են՝ հատկապես տարրական դասարանների մանկավարժի համար: Չէ՞ որ ուսուցիչը մանկուց պետք է երեխայի մեջ զարգացնի և արթնացնի սեր երգ-երաժշտության և առհասարակ մշակույթի նկատմամբ:

- Ունե՞ս որևէ կարգախոս, որով միշտ առաջնորդվում ես:

- Ոչինչ անհնար չէ, ուղղակի պետք է ցանկանալ և փորձել, այդ դեպքում, վստահ եմ, որ ամեն բան կստացվի:

- Ի՞նչ կմաղթես առաջին կուրսեցիներին:

- Եթե եկել ենք համալսարան, ապա յուրաքանչյուրս մեր հնարավորությունների չափով պետք է սովորենք և հնարավորինս շատ գիտելիքներ ստանանք: Կյանքում անպետք գիտելիք չկա, ամեն բան հետագայում անհրաժեշտ է լինելու, տեղեկացված մարդն այս դարաշրջանում չի կարող սահմանափակ լինել: Եվ ես կփորձեմ ժամանակին համահունչ քայլել, լավ սովորել, ինչը խորհուրդ կտամ նաև առաջին անգամ Մանկավարժական համալսարան ոտք դրած ուսանողներին:

- Ինձ մնում է ասել՝ բարի գալուստ Մանկավարժական և բարին ընդ ձեզ...

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախում մեկնարկած «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» խորագրով երկրորդ միջազգային երիտասարդական գիտաժողովին մասնակցում էին 63 հեղինակավոր գիտնականներ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Լեհաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Հայաստանից և Արցախից, մասնագետներ և վերլուծաբաններ:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին Արցախի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, հասարակական կազմակերպությունների և բուհերի ներկայացուցիչները: ՀՊՄՀ-ից գիտաժողովին մասնակցեցին Պատմության և իրավագիտության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ Անի Խաչատրյանը և Բանասիրական ֆակուլտետի հայցորդ Օվսաննա Խաչատրյանը:

«Արցախը՝ հանուն խաղաղության, ճանաչում՝ հանուն խաղաղության» կարգախոսը կրող գիտաժողովի լիագումար նիստը բացվեց Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի՝ գիտաժողովի մասնակիցներին ուղղված ուղերձով: Լիագումար նիստից հետո գիտաժողովի մասնակիցները աշխատանքները շարունակեցին իրավագիտության, քաղաքագիտության, տնտեսագիտության,

պատմության, հոգեբանության և լրագրության մասնաճյուղերում:

«Սա արդեն իմ երկրորդ մասնակցությունն է այս գիտաժողովին: Այս տարի մեզ հրաշալի հնարավորություն տրվեց ավելի լավ ծանոթանալու Արցախի միջազգային ճանաչման հիմնախնդիրներին ու հեռանկարներին: Գիտաժողովի ընթացքում քննարկվեցին տարատեսակ հարցեր և, ի վերջո, բոլորս եկանք այն եզրահանգմանը, որ մեզանից յուրաքանչյուրը Արցախի գիտության դեսպան է, և մեր բնագավառում պիտի փորձենք տարբեր միջազգային հարթություններում ներկայացնել Արցախի Հանրապետության վերաբերյալ բացառապես օբյեկտիվ տեղեկատվություն և ի լուր աշխարհի բարձրաձայնենք Արցախին վերաբերող հիմնահարցերը»,- ասաց Անի Խաչատրյանը:

Գիտաժողովը կազմակերպել էր Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորումը՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ֆինանսական աջակցությամբ:

Գիտաժողովի մասնակիցները միաժամանակ վայելեցին Արցախի տեսարժան վայրերը և գեղեցիկ բնությունը:

Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանում

Մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի 5 ուսանող և 1 ասպիրանտ փետրվարի 20-ից հուլիսի 4-ը Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանում էին: Նրանք փոխանակման ծրագրով Հումանիտար գիտությունների ֆակուլտետում մեկ կիսամյակ զարգացրին իրենց մասնագիտական հմտություններն ու ընդլայնեցին կրթական հնարավորությունները:

Վերլուծական մտածողության ձևավորման, ինքնուրույն հետազոտական աշխատանք ծավալելու, դասախոսների հետ պարզ, անմիջական շփումներ հաստատելու, առարկայացանկն ինքնուրույն կազմավորելու վերաբերյալ Հունգարիայից ժամանած ուսանողները խոսում են հիացմունքով՝ ցանկություն հայտնելով մեզանում ևս տեղայնացնելու և տարածելու այդ մշակույթը:

Ուսանողական հանրակացարանի մասին մագիստրոս Սաթիկ Ղուկասյանը շատ էր լսել. ծրագրի շնորհիվ սեփական փորձով հնարավորություն ունեցավ նաև զգալ ու ապրել հասակակիցների հետ մի հարկի տակ, համալսարանի պատերից դուրս շարունակել ուսումնական պրոցեսը. «Բազմալեզվության պայմաններում ֆիլմերի ցուցադրություններ, օտարերկրացիների հետ շփումներ, համատեղ քննարկումներ՝ամենատարբեր թեմաներով»:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի մագիստրոսը կարծում է, որ առավել արդյունավետ կլիներ բուհում միաժամանակ մի քանի օտար լեզուների ուսուցումը՝ լեզվական անջրպետը առավելագույնս հաղթահարելու համար:

Արևիկ Հակոբյանի համար Հունգարիայում հայտնվելն ու Կաթոլիկ համալսարանում ամիսներ շարունակ սովորելը երազանք էր. փոքր խմբերով ուսուցումը, սեփական հետազոտություն կատարելու հնարավորությունն ու դասախոսների հետ ինտերակտիվ աշխատանքը նա համարում է հունգարական կրթական համակարգի լավագույն ձեռքբերումներից: ՀՊՄՀ-ի ուսանողն ուրախությամբ է նկատում՝ ՀՊՄՀ-ում ներդրված Google classroom համակարգն օգնեց հաղթահարել հունգարական կրթական ոլորտի նորարարությունները:

Բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող Գայանե Վարդանյանի համար ծրագիրն անանախադեպ էր. Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանում հատկապես գրավել է ուսանողին ազատ ինքնարտահայտվելու հնարավորություն ընձեռելը: Նա վստահ է, որ հայագիտության ոլորտում իր և ընկերների ձեռքբերումները կլինեն շարունակական. այդ է վկայում նաև հյուրընկալող երկրի ուսանողների հետաքրքրվածությունը Հայաստանի բազմադարյա մշակույթի, ինչպես նաև հայկական ավանդական խոհանոցի հանդեպ:

Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Մանկավարժական համալսարանում մեկ կիսամյակ ուսումնառությունն էր անցնում Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանի 5 ուսանող, իսկ ՀՊՄՀ-ից ծրագրին մասնակցում էին 6 ուսանողներ: Պատմության և իրավագիտության ֆակուլտետից՝ Արփինե Առաքելյանը, Սաթիկ Ղուկասյանը, Գայանե Վարդանյանը, Արևիկ Հակոբյանը, Քրիստինե Գևորգյանն ու Վաչագան Գրիգորյանը:

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՕՐԵՐ ԲԵԼԱՌՈՒՍՈՒՄ

Մանկավարժական համալսարանի 12 ուսանողներ «Ամառային դպրոց 2017» միջազգային ծրագրի շրջանակներում այցելեցին Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարան, որտեղ նրանց դիմավորեցին և իրենց համալսարանին ու կրթական գործընթացներին ծանոթացրին բելառուս ուսանողներն ու բուհի աշխատակիցները:

Մինսկ կատարած այցի ընթացքում Մանկավարժականի ուսանողները ծանոթացան մայրաքաղաքի տեսարժան վայրերին, եղան Հայրենական Մեծ պատերազմի, Գեղարվեստի թանգարաններում, «Ռատուշա» և «Կուռգան սլավ» համալիրներում, «Խատին» և «Օզեռցո» գյուղակ-թանգարաններում, Միռսկի և Նեսվիժ դղյակներում, Բելառուսի ազգային գրադարանում:

10-օրյա հագեցած ծրագրի ընթացքում ուսանողները մասնակցեցին նաև Բելառուսի Հանրապետության անկախության տոնակատարություններին, հանդիպեցին «Ամառային դպրոց» միջազգային ծրագրի նախորդ տարիների բելառուս մասնակիցներին, մեկ օր անցկացնելով նաև Բելառուսի պետական մանկավարժական համալսարանի «Օդապարիկ» ճամբարում:

Բելառուսից վերադարձած ուսանողները միակարծիք են՝ ծրագիրը հնարավորություն է ընձեռում ձեռք բերել նոր ընկերներ, ծանոթանալ այլ երկրի մշակույթին ու պատմությանը, ընդլայնել կրթական կապերը:

ԲԱՑԱՀԱՅՏԵՑԻՆ ՀՈՒՆԳԱՐԻԱՆ

«Ամառային դպրոց-2017» միջազգային ծրագրի շրջանակներում Մանկավարժական համալսարանի ուսանողները եղան Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանում, միաժամանակ բացառիկ հնարավորություն ունեցան բացահայտելու եվրոպական լավագույն երկրներից մեկը:

Բուդապեշտ կատարած երկշաբաթյա այցի ընթացքում աբովյանականները ծանոթացան երկրի կրթական համակարգին, շփվեցին Կանադայից, Թայլանդից, Ճապոնիայից, Ֆրանսիայից, Չեխիայից և Գերմանիայից եկած ուսանողների հետ և փորձեցին սովորել հունգարերեն:

Ուսանողները ծանթացան նաև Հունգարիայի, Պիտեր Պազմանի կաթոլիկ հասալսարանի պատմությանը, մշակութային ժառանգությանը, հունգարացի հայտնի գրողներին, դերասաններին, նկարիչներին, արվեստին և ճարտարապետությանը: Այցեր կազմակերպվեցին «Ազգային թանգարան», Պիլիսչաբայում գտնվող Պրտեր Պլազմանի կաթոլիկ համալսարանի գլխավոր մասնաշենք, «Բուդա» ամրոց, «Hospital in the rock» թանգարան, Բուդապեշտին հարակից Սենտենդրե քաղաքի բացօթյա «Էթնոգրաֆիկ» թանգարան, Գյոդոլոյի «Արքայական պալատ-թանգարան» և այլն :

Ծրագրի մասնակից ուսանողուհի Անի Աղաջանյանի կարծիքով Ծրագիրն ընդգրկուն էր և հետաքրքիր կազմակերպված. «Գեղեցիկ էր Բուդապեշտը իր թանգարաններով, մշակութային կոթողներով, տեսարժան վայրերով և ճարտարապետությամբ: 15 օրում կարողացանք ճամփորդել, նոր բան սովորել, զարգացնել լեզվական գիտելիքները, ընկերներ ձեռք բերել, ինչը հետագայում կարող է նոր միջմշակութային համագործակցության հիմք դառնալ»:

ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ԳՈՂՏՐԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ

«Ամառային դպրոց 2017» միջազգային ծրագրի շրջանակներում ապագա մանկավարժները Լիտվայում էին, ուր անցկացրած 10 օրերի ընթացքում հնարավորություն ունեցան երկրի կրթական համակարգին ու մշակույթին ծանոթանալը համատեղել լավ ժամանցի հետ:

Լիտվայի կրթական գիտությունների համալսարանի դասախոսները ծրագրի մասնակիցներին ծանոթացրին մերձբալթյան գողտրիկ երկրի պատմությանը, մշակույթին ու լեզվին. առաջին օրից ծրագիրը հագեցած էր քաղաքային զբոսանքներով, տեսարժան վայրեր այցերով:

Համալսարանի մասին դասախոսություն, այց Վիլնյուսի Հին, ինչպես նաև Կերնավե քաղաքներ և Լիտվայի 13-րդ դարի մայրաքաղաք՝ Տրակայ, որի ամ- ➤8

ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ԳՈՂՏՐԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ

➤7

րոց-թանգարանում հայ ուսանողները ծանոթացան երկրի պատմության տարբեր փուլերին վերաբերող իրերի, գեղանկարների ու ձեռագրերի: Ծրագրի մասնակիցների հաջորդ կանգառը Լիտվայի Կաունաս քաղաքն էր, որը հայ ուսանողներին տպավորեց իր բազմաթիվ գրախանութներով, սրճարաններով ու լիտվական կոլորիտով:

«Աններելի կլիներ չայցելել նաև Վիլնյուսի նկարիչների թաղամաս՝ Ուժուպիս, որը քաղաքի այլ թաղամասերից տարբերվում էր յուրօրինակ մթնոլորտով, սթրիթ-արտի յուրատեսակ դրսևորմամբ, փակ ու բաց ցուցասրահների առատությամբ»,- ասաց ՀՊՄՀ-ի ուսանողուհի Աստղիկ Կիրակոսյանն ու անմոռանալի հուշերի կողքին հավելեց նաև Վիլնյուսի պետական համալսարանից և երկրի միակ հայկական Սուրբ Վարդան եկեղեցում ստացած տպավորությունները:

10-օրյա միջազգային ծրագրի ընթացքում այցեր եղան նաև թանգարաններ, հինավուրց շինություններ ու տաճարներ, ամրոցներ, որտեղ ամեն անկյունում գերիշխում էր միջնադարյան մշակութային շունչը:

«Ամառային դպրոց 2017» միջազգային ծրագրի մասին խոսելիս Մանկավարժականի ուսանողները հավելեցին, որ իրականացավ ծրագրի կարևորագույն նպատակներից մեկը՝ տարբեր երկրներից եկած ուսանողների միջև ընկերական և միջմշակութային կապեր հաստատելը. «Ծրագրին մասնակցելը ունեցավ ևս մեկ էական և կարևոր նշանակություն. ծանոթանալով բազմաթիվ ազգերին ու նրանց մշակույթին՝ մենք ևս մեկ անգամ վերագնահատեցինք մերը՝ հայկականը»,-հավելեցին ուսանողները:

Ամառային դպրոց Չինաստանում

Մանկավարժական համալսարանի ուսանողներ Կարեն Սերոբյանն ու Արամ Մամիկոնյանը հունիսի 16-ից հուլիսի 2-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում մասնակցեցին Չինաստանի հարավարևմտյան համալսարանում անցկացվող «Ամառային դպրոց» միջազգային ծրագրին:

Ուսանողներն իրենց հիացմունքն ու տպավորությունները ներկայացրին. «Չինաստանը հրաշալի երկիր էր իր հիասքանչ բնությամբ ու մշակութային հարուստ ժառանգությամբ, գեղատեսիլ վայրերով ու քաղաքային յուրօրինակ ավանդույթներով, տեսարժան վայրերն էլ կարծես պատմությանը եզակի շունչ հաղորդող թանգարաններ լինեին՝ բազմազան ճարտարապետական լուծումներով»:

Ծրագիրը հագեցած էր բազմապիսի ուսուցողական և ժամանցային միջոցառումներով, որի շրջանակներում եղան չինարենի, ազգային մշակույթի և տնտեսությանը նվիրված դասեր, կունգֆուի և նետահարման դասընթացների մասնակցություն, այլազգի ուսանողների և նրանց ավանդույթների հետ ծանոթությունն էլ անմոռանալի հուշեր թողեց ապագա մանկավարժների հոգում:

Վարդգես ԳՈՒԼԻԿՅԱՆ

75 տարեկանում հանկարծամահ է եղել Մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Վարդգես Գուլիկյանը:

Նա ավարտել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի գեղանկարի, Երևանի Պետական գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարի բաժինները:

Տարբեր տարիների աշխատել է Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում՝ որպես բեմի նկարիչ, Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայում՝ որպես ֆիլմի նկարիչ, նախագծային ինստիտուտում՝ որպես ավագ ճարտարապետ, Երևանի քաղխորհրդի նախագծային ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ:

Վարդգես Գուլիկյանը 1990 թվականից դասավանդում էր Մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետում, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր էր:

1982 թվականից Հայաստանի նկարիչների միության, 1997-ից՝ Նկարիչների միջազգային միության անդամ էր:

Վաստակաշատ նկարիչն անհատական ցուցահանդեսներ է ունեցել Հոլանդիայում Լեհաստանում, Երևանում և այլուր: Նրա ստեղծագործություններից մի քանիսը պահվում են Հայաստանի նկարիչների միության և ՀՀ մշակույթի նախարարության ֆոնդերում:

Արժանացել է մի շարք պարգևների, հեղինակ է բազմաթիվ հրապարակումների:

Մանկավարժական համալսարանն իր խորը վշտակցությունն է հայտնում վաստակաշատ մանկավարժի, հայտնի նկարչի հարազատներին, մտերիմներին, գործընկերներին և ուսանողներին. նա սիրված էր բոլորի կողմից իր մարդկային բարձր հատկանիշների և պրոֆեսիոնալիզմի համար:

Երեխային հասկանալու համար ճամբարը իդեալական վայր է...

Կամավորական աշխատանքը բոլոր ժամանակներում էլ խրախուսվել է և դիտարկվել որպես մարդասիրական աշխատանք դեռևս 1920-ականներից՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Այսօր էլ շատերը մեծ տեղ են տալիս կամավորությանը, այն լավագույն հնարավորություն է երիտասարդների և մյուսների համար՝ ներգրավվելու հասարակական կյանքի մեջ:

Մանկավարժական համալսարանի ուսանողները ևս ակտիվ կամավորական աշխատանքով են զբաղվում տարբեր կրթական հաստատություններում, իսկ ամռանն իրենց պրակտիկան անցկացնում են հանրապետության տարբեր ճամբարներում:

Հանքավանի «Հասմիկ» մանկական ճամբարն այս տարի ընդունել էր Մանկավարժականի 9 ուսանողների, ովքեր 20-օրյա պրակտիկա իրականացրին ճամբարում:

Ճամբարի տնօրեն Ժորա Մուրադյանը կարծում է, որ մանկավարժի աշխատանքը բազմազան է ու շատ բարդ, իսկ լավ մանկավարժ լինելու համար յուրաքանչյուրը պետք է ունենա գիտելիքների մեծ պաշար, երեխաների հետ շփվելու ունակություն, գիտելիքները մատուցելու կարողություն:

«Պրակտիկան երեխաների հետ բազմաբովանդակ է անցնում, ուսանողներն այստեղ մեծ հաճույքով են աշխատում, իրենց գիտելիքներն այստեղ օգտագործում են, ինչպես նաև շատ բան են սովորում հենց այստեղից: Մանկավարժի աշխատանքը պետք է սկսի ճամբարից: Պրակտիկանտներն այստեղ տասնյակ օրեր են անցկացնում՝ ծանոթանալով և ճանաչելով երեխային»,- ասաց Ժորա Մուրադյանը:

Ուսանող-պրակտիկանտները ճամբարում հետաքրքիր խաղեր, միջոցառումներ և մրցույթներ են կազմակերպում:

Ճամբարի փոխտնօրեն Մուրադ Մուրադյանը նկատում է. «ՀՊՄՀ պրակտիկանտներն աչքի են ընկնում հատկապես իրենց մասնագիտական պատրաստվածությամբ. որպես մանկավարժներ շատ լավ են իրենց դրսևորում, նրանց մանկավարժական ձիրքն առավել զարգացած է: Երկար տարիներ ունեցել ենք Մանկավարժական համալսարանից կամավոր-պրակտիկանտներ և միշտ գոհ ենք եղել նրանցից»:

Փոխտնօրենը երեխաների համար կարևորելով ճամբարի դերը՝ նշեց, որ այս դարաշրջանում նման հնարավորություն ընձեռելը երեխաների զարգացման համար մեծ նշանակություն ունի: «Մի քանի օր կտրվում են փողոցից, համակարգիչներից և զգում են, թե իսկական մանկությունն ինչ է: Այստեղ չկան հեռախոսներ, իսկ համակարգիչների փոխարեն հետաքրքիր, զվարճալի, իրական մանկական խաղեր են: Ճամբարում նրանք ինքնահաստատվում են, կայանում, ավելի ինքնուրույն են դառնում, սովորում են կարգուկանոն և այլն: Տարիների հետ համընթաց ճամբար ենք ներմուծում նոր արդիական մեթոդներ, իսկ անցած տարիների լավագույն ավանդույթները պահպանում ենք»,- ասաց Մուրադյանը:

ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Թերեզա Հովհաննիսյանն առաջին անգամ է որպես կամավոր եկել ճամբար: Շատ գոհ ու տպավորված է, քանի որ տեղում հնարավորություն ունի իր ստացած գիտելիքները կիրառել և տեսնել արդյունքը: «Երեխային ուսումնասիրելու և հասկանալու համար ճամբարը շատ կարևոր ու իդեալական վայր է, օրվա տարբեր ժամերին դու տեսնում ես նրանց տարբեր իրավիճակներում: Այստեղ տարբեր տարիքային երեխաների հետ ենք աշխատում, մասնագիտորեն հմտանում ենք»,- ասաց Թերեզան և հավելեց, որ իրենց դպրոցից առավել դուր է եկել ճամբարում անցկացվող մասնագիտական պրակտիկան:

Բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Սեդա Բաղդասարյանն էլ հավելեց. «Ճամբարը երեխաների համար շատ կարևոր է, այսօրվա երեխաները մեծամասամբ մեկուսացած են մանկությունից, ողջ օրն անցկացնում են համակարգիչների առաջ նստած, իսկ ճամբարում շփվում են միմյանց հետ, մերվում են միջավայրին և այլն»:

Բոլոր պրակտիկանտները նկատեցին, որ համալսարանում ստացած տեսական գիտելիքներն այսօր լիովին բավարարում են իրենց գործնականում աշխատելու համար: 20-օրյա աշխատանքից հետո լավագույն պրակտիկանտները հնարավոր է, որ հետագայում ևս ճամբարում իրենց գործունեությունը շարունակելու առաջարկ ստանան:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 29.09. 2017 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am